01/10.5/5004-10
2010-05-04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հակոբ Հակոբյանի, Սուքիաս Ավետիսյանի, Լյովա Խաչատրյանի, Էդուարդ Շարմազանովի, Գագիկ Մելիքյանի և Արաիկ Հովհաննիսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Հայտնում ենք, որ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա կենսաթոշակ ստացող անձանց շրջանակի ընդլայնումը չի բխում կենսաթոշակային ապահովության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունից, ուստի, Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված նախագծի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ա. Ասատրյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-848-16.03.2010-ԱՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասինե Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-258 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում՝

ա) «գե կետը «քրեակատարողական ծառայողներրը բառերից հետո լրացնել «եւ դատական կարգադիչներրը բառերով.

բ) «եե կետը «քրեակատարողական ծառայությունումե բառերից հետո լրացնել «դատական կարգադրիչների ծառայությունումե բառերով։

Հոդված 2. Օրենքի 26-րդ հոդվածի վերջին նախադասությունը «քրեակատարողական ծառայությանե բառերից հետո լրացնել «դատական կարգադրիչների ծառայությանե բառերով։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հիմնավորում

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասինե ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

Ելնելով նրանից, որ ՀՀ դատական օրենսգրքով դատական կարգադրիչների ծառայության պաշտոնները համապատասխանեցված են քրեակատարողական ծառայության պաշտոնների հետ, եւ հետեւաբար դատական կարգադրիչների ծառայությունները հավասարեցված են

քրեակատարողական ծառայությունների հետ, նպատակահարմար ենք համարում դատական կարգադրիչների կենսաթոշակային խնդիրները կարգավորել միասնական օրենսդրությամբ։